ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/43» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.12.2016թ. ժ. 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Պետրոսյան, Թ.Երկանյան, Է.Ղազարյան, Ա.Գասպարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Վարդանյան

1. Բանակցությունների անցկացման մասին

1.1. Բանակցությունների վայրը՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 224/2 սենյակ

1.1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մրցույթի մասնակիցներից ոչ ոք չէր ներկայացել միաժամանակյա բանակցություններին, գնահատող հանձնաժողովը որոշեց անփոփոխ թողնել թիվ 2 արձանագրության արդյունքները:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1.2. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 3,15,20,43,60,61,105 չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել վերը նշված չափաբաժինները՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1.3. Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, ինչպես նաև նույն կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման համար:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝		Ա.Մկրտչյան
Անդամներ՝		Տ. Պողոսյան
		Թ.Երկանյան
		Է. Ղազարյան
		Ա.Գասպարյան
Քարտուղար՝		Ա. Վարդանյան